ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/63/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի փետրվարի 17-ին քննելով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Սուրենի Բալասյանի ընտանիքի անդամ՝ Աննման Ազատի Ղուկասյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/63/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրականացրել է Աննման Ղուկասյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի

հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է, որ Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չեն հայտարարագրվել Աննման Ղուկասյանին պատկանող «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների համապատասխանաբար 50% և 100% բաժնեմասերը:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 5-ին Աննման Ղուկասյանին հասցեագրել է թիվ 01/492/1-2025 գրությունը՝ հրավիրելով Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Աննման Ղուկասյանն ստացել է 2025 թվականի փետրվարի 7-ին, դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրանային փոստին: Աննման Ղուկասյանը միաժամանակ նշել է, որ 2025 թվականի փետրվարի 12-ին վերոնշյալ արձանագրության կազմմանը կներկայանա իր ներկայացուցիչ՝ Հակոբ Բալասյանը:

1.3 2025 թվականի փետրվարի 12-ին պատշաճ ծանուցված Աննման Ղուկասյանի ներկայացուցիչ՝ Հակոբ Բալասյանի (հիմք՝ Հանձնաժողով ներկայացված 2025 թվականի փետրվարի 12-ի հասարակ գրավոր լիազորագիրը) ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 13/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Աննման Ղուկասյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Աննման Ղուկասյանի ներկայացուցիչ՝ Հակոբ Բալասյանը 2025 թվականի փետրվարի 12-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Հանձնաժողովին հայտնել է, որ «Աննման Ղուկասյանին ինքը՝ Հակոբ Բալասյանն է օգնել, որ լրացնի հայտարարագիրը, լրացման ժամանակ տեղյակ չեն եղել, որ փայաբաժինը համարվում է արժեթուղթ: Կարծել են, որ արժեթղթերի հատվածը վերաբերում է միայն բաժնետիրական ընկերություններին և որևէ դիտավորություն առկա չի եղել տվյալները չհայտարարագրելու համար»:

Աննման Ղուկասյանի ներկայացուցիչը նաև խնդրել է «գործի քննության ժամանակ հաշվի առնել այն հանգամանքը, որ Աննման Ղուկասյանի կողմից հայտարարագրված են այդ կազմակերպությունից ստացված եկամուտները, ինչը ևս հաստատում է, որ որևէ միտում առկա չի եղել, նաև խնդրել է դիտարկել, որ խախտումը հանդիսանում է լրացման կարգի խախտում, իսկ իրավախախտումը դրսևորվում է առաջին անգամ, քանի որ առաջին անգամ է տեղեկանում, որ այդ տվյալները ենթակա են եղել հայտարարագրման»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/63/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Աննման Ղուկասյանը՝

3.1 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների համաձայն հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի կինը:

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն Աննման Ղուկասյանը 1995 թվականից հանդիսանում է «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների համապատասխանաբար 50% և 100% բաժնեմասերի սեփականատերը: Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն նշված ընկերությունները գործող են, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

3.4 Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել իր՝ «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների համապատասխանաբար 50% և 100% բաժնեմասերը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Նույն հոդվածի 2-րդ

մասի համաձայն հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ

ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության, ինչպես նաև շահերի վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Աննման Ղուկասյանի կողմից սույն որոշմամբ հաստատված փաստերի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի ընտանիքի անդամ՝ Աննման Ղուկասյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ 2024 թվականի ապրիլի 10-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ հայտարարագրել է ոչ ամբողջական տվյալներ, թույլ տալով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտում, այն է՝

Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների բաժնեմասերի վերաբերյալ տվյալները, որոնք պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը արձանագրում է, որ Աննման Ղուկասյանի կողմից Հայտարարագրում «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերություններում բաժնեմասնակցություն ունենալու վերաբերյալ տվյալը չհայտարարագրելը հնարավորություն չի տվել ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու անձի գույքային դրության մասին և վտանգել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարակական շահը՝ ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Անդրադառնալով, Աննման Ղուկասյանի ներկայացուցչի կողմից ներկայացված այն պարզաբանմանը, որ Աննման Ղուկասյանի ՍՊ ընկերություններում ունեցած բաժնեմասնակցության տվյալները չեն հայտարարագրվել, քանի որ լրացման ժամանակ կարծել են, որ արժեթղթերի հատվածը վերաբերում է միայն բաժնետիրական ընկերություններին, Հանձնաժողովը արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ հայտարարատու անձի բաժնեմասերի վերաբերյալ տվյալների

հայտարարագրման պահանջը ուղղակիորեն սահմանված է ինչպես Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, այնպես էլ Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույցում:

Ինչ վերաբերվում է Աննման Ղուկասյանի ներկայացուցչի կողմից ներկայացված այն պարզաբանմանը, որ Աննման Ղուկասյանի կողմից Հայտարարագրում ներկայացված են նշված կազմակերպություններից ստացված եկամուտները, ապա Հանձնաժողով արձանագրում է, որ թեև Աննման Ղուկասյանը Հայտարարագրի «Գ.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում հայտարարագրել է նշված ընկերություններից ստացված աշխատավարձը որպես եկամուտ, այդուհանդերձ դա բավարար չէ վերջինիս տվյալ ընկերություններում բաժնեմաս ունենալու վերաբերյալ տվյալը բացահայտված համարելու համար: Ավելին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերություններում բաժնետեր լինելու չհայտարարագրված տվյալը որևէ այլ կերպ ևս չի բացահայտվել վերջինիս Հայտարարագրում:

Ինչ վերաբերում է ներկայացուցչի կողմից ներկայացված բացատրությամբ մատնանշված իրավախախտումն առաջին անգամ արձանագրելու հանգամանքին, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ գործող օրենսդրության համաձայն նշված հիմքով վարչական պատասխանատվությունը բացառող հիմք սահմանված չէ:

Այսպիսով, ներկայացուցչի կողմից ներկայացված պարզաբանումները իրավախախտումը գնահատելու և վարչական պատասխանատվություն սահմանելու համար որևէ նշանակություն չեն կարող ունենալ:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (*փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով*), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ

կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Սուրենի Բալասյանի ընտանիքի անդամ Աննման Ազատի Ղուկասյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննման Ազատի Ղուկասյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Աննման Ազատի Ղուկասյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ